

Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՌՈԳՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱՋՄԻ ԸՆԹԱՅԲՈՒՄ

Հայրենական Մեծ պատերազմի հենց սկզբից Առողջապահու-
թյան Մինիստրությունից ինստիտուտները լայն մասնակցություն
ունեցան Հայրենիքի պաշտպանությունից զործուծ:

Առաջնորդի 1941 թ. հունիս 3-ի հրամանի՝ համաձայն՝
ինստիտուտները վերակառուցեցին իրենց ամբողջ աշխատանքը՝
առաջին հերթին պատերազմի կարիքները ապահովելու նպա-
տակով:

Աժեն մի ինստիտուտ կատարում էր իր աշխատանքը իր
պրոֆիլի համապատասխան: Բժշկական ինստիտուտի աշխա-
տանքը հիմնականում նպատակ ունիր ռազմաճակատի և թիկուն-
քի համար մասնագետներ պատրաստել, ուսումնասիրել և մշակել
պաշտպանողական պրոբլեմատիկան, ակտիվորեն մասնակցել
էվակուա-հոսպիտալների աշխատանքին, նաև ապահովել:—

ա) բարձրորակ և մասնագիտացրած օդնությունը Հայկա-
կան ՍՍՌ էվակուա-հոսպիտալների բազայի բոլոր վիրավորների
և հիվանդների կոնտինգենտին:

բ) Հայաստանի պաշտպանողական ձեռնարկությունների
քուլտական սպասարկման գործի օժանդակությունը:

գ) էվակուա-հոսպիտալների և պաշտպանողական ձեռնար-
կությունների բժիշկների ու բժշկական պերսոնալի որակի բարձ-
րացումը:

դ) պատերազմի պահանջներին համապատասխան գիտա-հե-
տազոտական աշխատանքը, պաշտպանողական բնույթի բժշկա-
կան խնդիրների ուսումնասիրությունն ու մշակումը:

ե) տեղական հուժկության պատրաստվող դեղամիջոցների
գործարկումն ու հավանություն տալը կլինիկաների կողմից:

զ) ռազմական ամբիոնի աշխատանքի ուժեղացումը՝ լավա-

գույն կերպով պատրաստված կադրերի և լիարժեք բանակային բժիշկների շրջանավարտ տալու համար, ուսուցման բոլոր առարկաների ավանդուժը բարձր մակարդակի վրա, նույնիսկ Ինստիտուտի դասատուներից շատերի մոբիլիզացման դեպքում:

Պատերազմի առաջին իսկ տարում Ինստիտուտի գիտ. աշխատողները որոշ մասը բանակ էին կանչվել. դրանց մի մասին աշխատանք էր տրված էվակուա-հոսպիտալներում, այնպես որ նրանք հնարավորութուն ունեին միաժամանակ առաջ տանել իրենց մանկավարժական աշխատանքը Ինստիտուտում: Մյուս մասը պաշտոնավարում էր գործող բանակում:

Մոբիլիզացվածների թվում էին պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ, լաբորանտներ, Ըստ գիտական աստիճանի նրանց մոտ կեսը բժշկական գիտութունները դոկտորներ և թեկնածուներ էին:

Կլինիկական ամբիոնների վարիչները, դոցենտներն ու ասիստենտները, ինչպես և տեսական ամբիոնների առաջավոր աշխատակիցների զգալի մասը — թե մոբիլիզացվածները և թե ոչ մոբիլիզացվածները — պատերազմի սկզբից աշխատում էին էվակուա-հոսպիտալներում իբրև կոնսուլտանտներ կամ ղեկավար խիրուրգներ, թերապևտներ, նեվրոպաթոլոգներ, կամ թե վարում էին հոսպիտալների, բաժանմունքների, մասնագիտական կաբինետների պետերի, օրդինատորների, բժշկական մասի պետերի պաշտոնները:

Այսպիսով Բժշկական ինստիտուտի աշխատակիցներն ապահովեցին սեփական ինչպիսի էվակուա-հոսպիտալների վերավորներին և հիվանդներին բարձրորակ բժշկական օգնութայամբ:

Պատերազմի կարիքները պահանջեցին բժիշկների և միջին բժշկական աշխատավորների մեծ մասի վերադարձավորում՝ համապատասխան վերավորների ու հիվանդների կոնտինգենտին:

Պատերազմի սկզբում մենք չունեինք և չէինք էլ կարող ունենալ բավականաչափ խիրուրգներ, թերապևտներ և այլ մասնագիտութունների բժիշկներ՝ էվակուա-հոսպիտալների պահանջը լրիվ բավարարելու համար:

Որակի բարձրացումը և վերապատրաստումը երեք եղանակով էր կատարվում.

1) Ամբիոններին կից կազմակերպվում էին հատուկ դասընթացներ՝ խիրուրգիայի, գիպսավորման տեխնիկայի, արյան ներարկման, ռադիակային թունավոր նյութերի (ՌԹՆ) գործա-

զրուծից մնասլածքների կլինիկայի ու թերապիայի, ՌԹՆ տոքսիկոլոգիայի, ռադիա-դաշտային խիրուրգիայի, ինֆեկցիոն հիվանդությունների բուժման ու պրոֆիլակտիկայի և այլ ճյուղերի գծով:

2) կազմակերպվում էին դասընթացներ թերեւտիկ և կլինիկական ամբիոններին կից:

3) վերակազմվում էր ամբողջ դիտա-հետազոտական աշխատանքը թե ամբիոններում և թե հոսպիտալներում՝ պատերազմի պահանջներին համապատասխան:

Ընդամենը պատրաստված են Ինստիտուտի ամբիոններին կից տարբեր դասընթացների միջոցով 1272 հոգի, որոնց մեջ 26 քույր գիպսավորման տեխնիկայի գծով: Պատրաստվածները բաշխուժը ըստ մասնագիտությունների պարզ երևում է № 1 տախտակից:

ՏԱԽՏԱԿ 1

ԲԺԻՇԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻՆ ԿԻՑ

| Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ն Ե Ր | ԲԺԻՇԿՆԵՐԻ քանակը |
|--|------------------|
| 1. Խիրուրգիա | 50 |
| 2. Գիպսավորման տեխնիկա | 20 |
| 3. Ռադիա-դաշտային խիրուրգիա | 25 |
| 4. Արյան ներարկում | 150 |
| 5. ՌԹՆ ինդիկացիա, զեգագացիա և տոքսիկոլոգիա | 200 |
| 6. ՌԹՆ թունավորման կլինիկա և բուժում | 200 |
| 7. Մալարիայի կլինիկա և բուժում | 75 |
| 8. Ինֆեկցիոն հիվանդություններ | 451 |
| 9. Բուժական սնուցում | 24 |
| 10. Այլ դիսցիպլիններ | 70 |
| | <hr/> |
| | 1272 |

Ինստիտուտի գիտ. աշխատողների սիստեմատիկ կոնսուլտացիաները, որ տրվում էին հոսպիտալներում և որոնց ժամանակ բարդ ու հետաքրքրական դեպքերը կլինիկական քննության էին ենթարկվում, ինչպես նաև թերեւտիկ և կլինիկական ամ-

բիռններին կից հոսպիտալների դիւնդորական և քաղաքացիական բժիշկների համար կազմակերպված կոնսուլտացիաները զգալիորեն նպաստում էին ունկնդիրների որակի բարձրացման:

Բժիշկների պատրաստման և որակի բարձրացման գործում միժ տեղ էր բռնում Ինստիտուտի ամբիոնների գիտա-հետազոտական աշխատանքը, որ վերակառուցված էր պատերազմի պահանջներին համապատասխան և սարվում էր թե՛ ամբիոններին կից և թե՛ հոսպիտալներում:

Պատերազմական երեք տարիների ընթացքում Ինստիտուտում ավարտված է 85 գիտական աշխատություններ, որոնցից 56-ը պաշտպանողական նշանակություն ունեին: Այս վերջիններից 35 գիտ. աշխատություններ տպագրված են, 16-ը՝ հանձնված են տպագրության:

Մի շարք դեպքերում Ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքը գործնականապես լուծում էր բանակի և քաղաքացիական բնակչության բժշկական սպասարկման խնդիրները Հայկական ՍՍՌ-ում, որ հրատապ նշանակություն ուներ փոխադրական զգալի ռեվարությունների և երկրի կենսական կենտրոններից Հայաստանի որոշ չափով կտրված լինելու պայմաններում 1942 և մասամբ 1943 թ.:

Օրգանական քիմիայի ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Մնջոյան) շատ խոշոր և օգտակար աշխատանք է կատարել մի շարք առաջին անհրաժեշտության դեղեր յուրացնելու և արտադրության մեջ գործադրելու խնդրում: Բավական է ասել, որ պատերազմի առաջին իսկ տարում արտադրվում էին արդեն.—

1) Գլյուկոզա, 2) տաննալբին, 3) տաննոֆորմ, 4) գալլաթին թթու, 5) ուրոտրոպին, 6) քլորավոր կալցիում, 7) քլորավոր նատրիում, 8) դերմատոլ, 9) յոգոֆորմ, 10) պրոտարգոլ, 11) կոլլարգոլ, 12) ծծմբացիտիկ աղ, 13) սնդիկի օքսիդ, 14) երկաղաթթվուտային քիսին, 15) անգլիական աղ, 16) հեղուկ քոսի դեմ, 17) պեպտոն, 18) ծծմբաթթվային երկաթ, 19) նարկոզի և թեր, 20) անհատական ծրարների համար չթրվող զանգված:

Այս պրեպարատներից մի քանիսը, ինչպես գլյուկոզան, տաննալբինը, պեպտոնը՝ նույնիսկ արտածվում էին հարևան բնասվողիկաները և Հյուսիսային կովկաս: Քոսի դեմ գործադրվող հեղուկի արտադրությունը հնարավորություն տվեց խնայելու յուղերի և օձառի տասնյակ տոննաներ: Օրգանական քիմիայի

ամբիոնը կազմակերպել է և հնարավորութունն ստեղծել իր խնդրադայի վրա արտադրելու նուրբ քիմիական պրեպարատներ՝ թրթնջուկաթթու, քինազոլ, յատրեն, քլորոֆորմ և բիոխինոլը Ամբիոնի ջանքերի և հմտության շնորհիվ էպիդեմիոլոգիայի և միկրոբիոլոգիայի ինստիտուտը ստանում էր բավարար քանակութամբ քլորոֆորմ ու քինազոլ՝ շիճուկ ու պատվաստանյութ (վակցինա) արտադրելու համար։ Բիոխինոլը արտադրվում էր այնչափ, որ ոչ միայն Հայկական ՍՍՌ-ին էր բավարարում, այլ այդ պրեպարատը արտածվում էր նաև եղբայրական սեպպուբլիկաները։

Ամբիոնը պարզել է նաև մեծ գործնական նշանակութուն ունեցող մի քանի այլ խնդիրներ, այսպես. 1) յուրացրել է ՌԹՆ-ի ինդիկացիայի համար անհրաժեշտ սեպպուբլիկաների ու ինդիկատորների համար անհրաժեշտ քիմիկատների արտադրութունը, 2) նշանակալի օգնութուն է ցույց տվել ռազմական և քաղաքացիական բժշկական հիմնարկութուններին զեֆիցիտային սեպպուբլիկաների և զեղերի պատրաստման գործում (քացախաթթու, քացախային անհիդրիդ, ֆոսֆորմոլիբդենային նստարիում, նիկոտինաթթու և այլն), 3) մշակել է սուլֆիդինի 20%-անիլուծույթ պատրաստելու մեթոդիկան, 4) արդյունավետ աշխատանք է տարել հետևյալ ուղղությամբ՝ ա) տեղական ֆլորայի մեջ սեպպուբլիկաների ու ալկալոիդների պարունակութունը պարզելու նպատակով կատարված ուսումնասիրության (ստացված յուղը հանձնված է խիրուրգիական կլինիկային ապրոբացիայի համար), բ) նոր անստեպուկների սինթեզի (նույնպես հանձնված է ապրոբացիայի), գ) ինֆեկցիաների դեմ պայքարելու համար իբրև քիմիոթերապևտիկ միջոց առաջարկված ամիդների սինթեզի։ Արժամիդների մի քանի ներկայացուցիչները (101, 116) մասնագետների կողմից ճանաչված են արդեն իբրև սուբերկոլորի որոշ ձևերի բուժման ժամանակ դրական արդյունք տվող միջոց, մյուս պրեպարատների (96 և 103) կլինիկական փորձարկումը դեռևս շարունակվում է։

Այս բոլոր աշխատանքների և տեղական միջոցների իրացման փորձի հիման վրա ամբիոնը մշակել է քիմիկա-ֆարմացևտիկական պրեպարատների արտադրության մի սխեմա և ներկայացրել համապատասխան ինստանցիաներին ի հաստատութուն, որին հետևել է Մինիստրների Սովետի որոշումը՝ նոր բժշկական օրիգինալ պրեպարատների մշակման ու սինթեզի

համար Երևան քաղաքում քիմգործարան կազմակերպելու և ամբիոնին առանձին քիմֆարմլաբորատորիա արամադրելու մասին:

Պաշտպանողական խոշոր նշանակութիւն ունեցող աշխատանք է կատարել Յարմակղոզիայի ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Միրզոյան): Ամբիոնի օգնութեամբ կազմակերպվել է ռեսպուբլիկական սանիտարա-քիմիական լաբորատորիա: Ամբիոնի բաղաձայն վրա կազմակերպվել է Երևանի քաղաքային սանիտարա-քիմիական լաբորատորիան, որ հնարավորութիւն է ալել ամբիոնին ծավալել կազմակերպչական ու գիտազործնական միջոցառումներ և պատրաստել կադրեր — 200 քաղաքացիական ու զինվորական բժիշկներ ռազմական թունավոր նյութերի ինդիկացիայի, դեզագացիայի ու տոքսիկոլոգիայի դժով և ռեսպուբլիկայի ձեռնարկութիւնների համար՝ 50 քիմիկոս-աննդագետ: Օրեկանների սանքիմլաբորատորիաների աշխատակիցների միօրյա հավաքույթների միջոցով ամբիոնը պարզաբանել է այդ աշխատակիցների համար բոլոր նոր հրահանգները և ՌԹՆ-ի ինդիկացիային ու դեզագացիային վերաբերող բոլոր նորութիւնները: Փորձնական աշխատանքներից հետո ամբիոնը ինքնուրույն կերպով մշակել է Հայկական ՍՍՌ Առողջապահութեան Մինիստրութեան հավանութեանն արժանացած մի լիակատար հրահանգ՝ կայուն թունավոր նյութերով վարակված հագուստը դեզագացիայի ենթարկելու համար դեղինֆիկցիոն կամերաները հարմարեցնելու մեթոդիկայի մասին:

ՀՍՍՌ վայրի դեղաբույսերի ուսումնասիրութիւնը և ժողովրդական բժշկականութեան մեջ գործադրվող բուսական հումութի փորձնական հետազոտութիւնը հնարավորութիւն տվին գործնականորեն ձեռնարկել մի շարք դեղերի ապրոքացիայի, ինչպես՝ 1) Ռաթանիայի արմատի փոխանակիչի՝ Polygonum cornutum-ի արմատների, 2) Օֆֆիցինալ մածուցիչ նյութերի փոխանակիչի՝ փշատի լայն տարածված պտուղների պրեպարատի, որ պրոֆ. Միրզոյանը «փշատին» է անվանել: Ստացված է բուժական վիտամինացված ջեմ, կարբոլին, սննդարար նշի փոշի:

Բացի դրանից ամբիոնը Բուսաբանական այգու հետ միասին շարունակում է ուսումնասիրել ռեսպուբլիկայի բուսական ծածկույթը, ըստ որում արդեն հայտնաբերված են՝ խուխարեր-

միջոցների մի շարք փոխանակիչներ, լուծողականներ, արկարոիդ
և գլյուկոզիդ պարունակող բույսեր: Առաջարկված է նոր պրեպարատ
քոսի դեմ — plumbagin:

Սննդի հիգիենայի ամբիոնը (վարիչ՝ պրոֆ. Լ. Հարությունյան) ակտիվորեն աջակցել է՝ 1) էվակուա-հոսպիտալների սննդի բլոկների կազմակերպմանը, 2) էվակուա-հոսպիտալների վիրավորների ու հիվանդների սննդի օրաբաժինը վիսամինացնելուն ու հսկողութուն սահմանելուն, 3) էվակուա-հոսպիտալների հետ միասին բժշկական կուլինարիային, բժշկական կերակուրների վիտամինացմանը և վիրավորների ու հիվանդների սնունդը բաղադրանքաբանելու մեթոդներին վերաբերող 6 ցուցահանդեսների կազմակերպման, 4) էվակուա-հոսպիտալների դիետ. բժիշկների ու դիետ. քուլյերի և նրանցի ու ուսյունների քաղաքացիական բժիշկներին պատրաստման ու վերապատրաստման գործին, 5) 1943—44 թ. ձմռանը բժավոր օրինի դեմ տարած պայքարին, հակաէպիդեմիկ միջոցառումների մշակման, սանլուսաշխատանքներ տանելուն, սննդի արդյունաբերութայն և հասարակական սննդի ցանցի հիմնարկներում սանիտարական միջոցառումներ իրագործելուն:

Աշխատանքի հիգիենայի ամբիոնը (վարիչ՝ պրոֆ. Միրզարեկյան) անց է կացրել խորացած հետազոտում և գիտագործնական ուսումնասիրութուն խոշոր օբեկտներում (Կիրովի անվ. կոմբինատ, Կիրովականի քիմկոմբինատ, Նրևանի մեքենաշինարարական գործարան) և ներկայացրել գործնական առաջադրանքներ աշխատանքի սանհիգիենիկ պայմանների բարելավման, բանվորների հիվանդացումների թիվը պակասեցնելու, նրանց առողջութայն պաշտպանութայն և աշխատանքի արտադրողականութայն բարձրացման խնդիրների վերաբերմամբ:

Ահագին աշխատանք են կատարել համարյա բոլոր կլինիկական՝ մասնավորապես խրոնիկական, թերապևտիկ, ներվային հիվանդութունների և հոգեբուժական ամբիոնները:

Հիմնականում այդ ամբիոնների աշխատակիցները ապահովել են էվակուա-հոսպիտալների և պաշտպանողական օբեկտների ու ձևանարկութունների բժշկական կազրերի պատրաստութունն ու վերաորակավորումը: Կլինիկական ամբիոնների գրեթե բոլոր պրոֆեսորները, դոցենտներն ու ասիստենտները, էվակուա-հոսպիտալներում որևէ պաշտոն վարելով կամ կոնսուլտանտ լինելով

հանդերձ՝ անմիջապես ղեկավարում էին ուղի հոսպիտալներին ամբողջ բուժական և զինա-հետազոտական աշխատանքը: Կլինիկական ամբիոնները միևնույն ժամանակ ամբողջ սեպուլսիտիկայի բժշկական էքսպերտիզայի հիմնական բաղան էին ներկայացնում: Կլինիկական ամբիոններին աշխատակիցները, հոսպիտալներին և ղինկոսիտալներին ու այլ զին-բժշկական հանձնաժողովներին որակյալ անդամները լինելով՝ վճռում էին սաղմարժը-կական էքսպերտիզայի բոլոր խնդիրները:

Կլինիկական և տեսական ամբիոններին մի քանիսը վերջին կուրսերի ուսանողներին հետ միատեղ շատ գործունյա մասնակցութուն էին ցուցաբերում ինֆեկցիոն հիվանդութուններին հնարավոր էպիդեմիաների բռնկվելու դեմ:

Արժե նշել, որ Ինստիտուտի աշխատակիցներից 15 հոգի պարգևատրված են շքանշաններով:

Պատմութունից հայտնի են ղեկավար, երբ էպիդեմիաների դարձացումը, հակառակ երկրի բոլոր ջանքերի, պատճառ է դառնում հաղթանակի համար վճռական նշանակութուն ունեցող ճակատամարտերի վիժեցման: Ռազմաճակատի և թիկունքի բարորութունն առաջնակարգ պայման է հանդիսանում գործի մարտունակութունը բարձր մակարդակի վրա պահելու համար:

Էպիդեմիոլոգիայի և միկրոբիոլոգիայի ինստիտուտին, նրա պրոֆիլի համապատասխան, պատկանում էր ղեկավար դերը ինֆեկցիոն հիվանդութուններին ղեմ պրոֆիլակտիկ միջոցառումներ ձեռնարկելու և պայքար մղելու գործում և իրոք, եթե անգամ խաղաղ ժամանակ այդ Ինստիտուտի աշխատանքը պաշտպանողական նշանակութուն է ունենում, ապա պատերազմի պայմաններում դա ձեռք է բերում է՛լ ավելի առաջնակարգ կարևորութուն:

Ինստիտուտը գործոն աջակցութուն է ցուցաբերել առողջապահութան օրգաններին, պաշտպանողական ձեռնարկութուններին և էվակուա-հոսպիտալներին սեպուլսիտիկայում հակաէպիդեմիկ միջոցառումներ ձեռնարկելու գործում:

Օգնութուն է ընձեռել սաղմարտա-էպիդեմիոլոգիկ միջոցառումներ կազմակերպելու ու կիրառելու և ինֆեկցիայով բռնված օջախները վերացնելու ուղղությամբ, ինչպես նաև նպաստել է սեպուլսիտիկայի էվակուա-հոսպիտալներին՝ վերավորների ու հիվանդների սնունդը բարելավելու գործում:

Ամբողջ զինա-հետազոտական աշխատանքը, բակտերիոլո-

գիական պրեպարատները արտադրութեան կազմակերպումը և գործնական աշխատանքը վերակառուցվել էր՝ նպատակ ունենալով առաջադրված խնդիրները լավագույն ձևով կատարելու:

Ինստիտուտի մի շարք աշխատակիցների մոբիլիզացման հետևանքով հարկավոր եղավ լրացնել Ինստիտուտի կազմը երկտասարդ բժիշկներով ու միջին բժշկական պրեսոնալով և սրանց շտապ պատրաստել գործնական աշխատանքի համար:

Բացի դրանից, 1941—1944 թթ. Ինստիտուտը պատրաստել է 95 էպիդեմիոլոգ-բժիշկ, 320 սանիտարական, զինվորական և ընդհանուր բժշկական ցանցի բժիշկ, 7 զինվորական և քաղաքացիական բուժակ և 81 լաբորանտ:

Հայրենական պատերազմի ընթացքում Ինստիտուտը պատրաստել է 69 զիտակյան աշխատութեյուններ, որոնք բոլորն էլ պաշտպանողական նշանակութեյուն ունենու:

Գիտահետազոտական աշխատանքը հիմնականում ընդգրկում է հետևյալ խնդիրները ուսումնասիրութեյունը.

1) էպիդեմիոլոգիան (տիֆոսպարազիտար հիվանդութեյունների, դիզենտերիայի և բժավոր տիֆի էպիդեմիոլոգիա).

2) պրոֆիլակտիկ պատվաստման էֆեկտիվութեյունը.

3) տեղական տիֆոսպարազիտար և դիզենտերեական շտամների ուսումնասիրութեյունը.

4) պտպատաչի ջերմի էպիդեմիոլոգիան և սպեցիֆիկ պրոֆիլակտիկան.

5) ջրամատակարարման զրութեյունը ըստ ռեսպուբլիկայի բնակավայրերի.

6) վիրավորները ու հիվանդների սնունդը էվակուացիոն պիտանքներում.

7) վիրամինացված տրեպարատների պատրաստումը.

8) դաշտային պայմաններում կատարվող բակտերիոլոգիական և քիմիական անալիզների նոր մեթոդների մշակումը, և այլն:

Այս թեմաների մշակման անհրաժեշտութեյունը բխում էր պաշտպանողական պահանջներից և ստացված հետևանքներն անմիջապես գործնական կիրառում էին գտնում կյանքում:

Մի քանի թեմաների ուսումնասիրութեյունն ու մշակումը հնարավորութեյուն ընձևուց կազմակերպել և ուժեղացնել բակտերիոլոգիկ պրեպարատների արտադրութեյունը: 1943 թ. Ինստիտուտը մշակեց մասնուկները փոքրուծութեյան և նրանց մահա-

ցության դեմ պայքարելու գործում մեծ նշանակութիւն ունեցող ասիդոֆիլ կաթի արտադրութեան մեթոդիկան, նույն տարում մշակվեց սոյայի կաթի և սոյայից պատրաստված նյութերի սանիտարա-հիգիենիկ սխեման ու տեխնոլոգիան, որը նպատեց Երևանի կաթի գործարանին կից հատուկ սոյայի ցելս կառուցելու գործին:

Ինստիտուտը ապրոբացիայի է ենթարկել և սանիտարա-հիգիենիկ եզրակացութիւն տվել 40 նոր առաջարկված սննդամթերքներին:

Մեծ նշանակութիւն է ունեցել հակաէպիդեմիկ միջոցառումները գործում Ինստիտուտի կողմից բակտերիոլոգիական պրեպարատները արտադրութիւնը: Մինչև պատերազմը Ինստիտուտը արտադրում էր սահմանափակ քանակութեամբ, ընդամենը 4 տեսակ, բակտերիոլոգիական պրեպարատ, այն է՝ ծաղկի վակցինա, դիդենտերիայի բակտերիոֆագ, հակակարմրուկային շիճուկ և հակառարիկ շիճուկ: Պատերազմի կարիքները պահանջեցին ընդլայնել արտադրութիւնը և կազմակերպել բակտերիոլոգիական պրեպարատներին նոր տեսակների արտադրութիւնը: Պատրաստելով համապատասխան կազրեր և հաղթահարելով արտադրական լաբորատորիաներ հիմնելու բոլոր կազմակերպչական դժվարութիւնները՝ Ինստիտուտը 1942 թվին յուրացրեց վերջերի Ֆագերի արտադրութիւնը, ապա 1943 թ.՝ դիֆթերիայի անատոքսինի, կարկամախտի անատոքսինի և հակակարկամախտային շիճուկի արտադրութիւնը և անմիջապես ձեռնարկեց նրանց իրազորման: Չնայած Առողջապահութեան Մինիստրութեան նախագծած չափազանց մեծ պլանին, Ինստիտուտը 1942 թ. 33 առկոսով գերակատարեց այն, իսկ 1943 և 1944 թ.թ. կատարեց լրիվ: Բակտերիոլոգիական պրեպարատների արտադրութիւնն այնպիսի չափեր ընդունեց, որ ոչ միայն ապահովեց ռեսպուբլիկայի կարիքները, այլ և զբալի օգնութիւն հասցրեց բանակին: ՀՍՍՌ Մինիստրների Սովետի որոշումով՝ 1943 թ. Ինստիտուտի արտադրական բաժինը տընտհաշվարկային կազմակերպութիւն դարձավ:

Սանիտարական կայաններին զիտական-մեթոդական ղեկավարութիւն ցույց տալու և տեղերում սուր-վարակիչ հիվանդութիւններին դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու նպատակով, Ինստիտուտի աշխատակիցները մինչև 1945 թվականի հունվարի 1-ը 167 անգամ եղել են շրջաններում՝

Մնալով տեղերում ընդհանուր առմամբ 1118 օր: Բացի դրանից Ինստիտուտը զղալի օգնութիւնն է ցույց տվել ռազմական մասերին և ղինվորական հաստատութիւններին՝ յուր պահանջված գնալքերում անմիջապէս ուղարկելով իր աշխատակիցներին այդ մասերն ու հաստատութիւնները: Իր ընթացիկ աշխատանքին զուգընթաց Ինստիտուտը լրիվ սպասարկել է Երևանի բոլոր էվակուա-հոսպիտալները: Պատերազմի սկզբից մինչև 1944 թ. հոկտեմբերի 1-ը Ինստիտուտը կատարել է 30969 ընթացիկ անալիզ:

Երևանի Բժշկական Ինստիտուտի սանիտարական ֆակուլտետի բաղան հանդիսանալով՝ էպիդեմիոլոգիայի և միկրոբիոլոգիայի ինստիտուտը ասպահովել է երիտասարդ կադրերի նորմալ պատրաստման գործը:

Արշան ներարկման ռեսպուբլիկական կայանը՝ պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի ղեկավարութեամբ՝ աշխատել է արշան կոնսերվացման նոր մեթոդներ զանկու ուղղութեամբ և տարել է շատ խոշոր ու գնահատելի կազմակերպչական ու գործնական աշխատանք՝ ներարկման համար առանց ընդհատումների արշան մատակարարելու գործը: Պատերազմի ընթացքում կայանը բաց է թողել մեծ քանակութեամբ արշուն:

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից դժվար աշխատանք էր ծանրացել Մալարիայի և բժշկական պարազիտոլոգիայի ինստիտուտի ուսերին: Խաղաղ ժամանակի պայմաններում ունենալով կենտրոնում որակյալ գիտական աշխատակիցներ ի հաստիք, իսկ շրջաններում՝ տրոպիկայաններում լավ պատրաստված մշտական կազմ, Ինստիտուտը նախապէս մշակված պլանով հետապնդում էր գիտական-հետազոտական լայն աշխատանք կատարել:

Պատերազմի սկսվելուն պէս Ինստիտուտի գիտական աշխատակիցները ինը և գիտատեխնիկականները ութը կանչվեցին բանակ. շրջանների տրոպիկայանների աշխատակիցների հիմնական կազմը նույնպէս մտրվիլաացվեց, իսկ մի քանի տրոպիկայաններ մնացին առանց աշխատակիցների: Հարկ եղաւ նոր կադրերով լրացնել թէ Ինստիտուտի և թէ շրջանային հիմնարկների պահանջը և զգալիորեն ուժեղացնել տրոպիկայանների գործնական ղեկավարութիւնը, որ և հաջողութեամբ իրագործվեց:

Պատերազմի հենց առաջին ամիսներին ինստիտուտը հռանդուն միջոցներ ձեռք առավ Սովետական բանակի մարտիկներին մալարիայի ինֆեկցիայից զերծ պահելու համար:

Հակամալարիային պայքար տանող հիմնարկների կազմերը լրացնելու հետ միասին՝ Ինստիտուտը սկսեց պատրաստել ու վերապատրաստել երիտասարդ կադրեր, մասնավանդ զինվորական բժիշկներ ու բուժաշխատողներ, կազմակերպելով հատկապես նրանց համար համապատասխան դասընթացներ: Այդ միջոցառումը հնարավորութուն տվեց մալարիայի դեմ զինվորական մասերում տարվող պայքարը հասցնել բարձր աստիճանի, որի համար Ինստիտուտը հաճախ շնորհակալութուն էր ստանում համապատասխան զորամասերից: Հայրենական պատերազմի երեք տարվա ընթացքում կազմակերպված դասընթացներում պատրաստվել են 357 զինվորական և քաղաքացիական բժիշկներ (որոնցից 58 բժիշկ-մալարիազետ, 173 զինվորական բժիշկ, 44 բժիշկ ընդհանուր բժշկական ցանցից, 82 բժիշկ-մանկաբույժ, 160 միջին բուժաշխատող, որոնցից զինվորական բուժակ՝ 34, տրոպիկայանների լաբորանտներ՝ 79 և բժշկական լաբորանտներ՝ 56):

Բացի հատուկ կուրսերից, Ինստիտուտի բաժիններում անհատական պատրաստութուն էին անցում 49 զինվորական և քաղաքացիական բժիշկներ, 31 զինվորական և քաղաքացիական միջին բուժաշխատողներ, 13 բիոլոգ-էնտոմոլոգ: Պատրաստված է նաև 80 բժշկական քույրեր:

Մալարիայի սեռակետից վտանգավոր շրջանների բժշկական աշխատողների համար մալարիայի բուժման և նրա դեմ պայքարելու գիտության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ երկօրյա սեմինարներ հրավիրվեցին, որոնց մասնակցեցին մինչև 300 հոգի: Նման սեմինարներ կազմակերպվեցին պատերազմի առաջին տարում՝ հատկապես զինվորական բժիշկների համար, որոնցից մասնակցեցին սեմինարներին 100 հոգի:

Հայրենական պատերազմի ընթացքում տրոպիկական հիվանդութունների դեմ գրված է 32 գիտական աշխատութուն, որոնցից 16-ը պաշտպանողական թեմաներով: Տպագրված է 8 աշխատութուն և հանձնված է տպագրության տասը:

Այդ աշխատութիւններէց ակտուալ նշանակութիւն ունեն հետեւյալները. 1. Բրնձի պլանտացիաների ընդհատ ոռոգման փորձը իբրև պրոֆիլակտիկական և ազդոտելանիկական միջոցառում մալարիայի դեմ վարելիք պայքարում» (Անանյան, Քոչարյան, Չուրկովա, Աղիզյան):

Նկատի ունենալով այն, որ Հայրենական պատերազմի պայմանները անհրաժեշտութիւն էին առաջացրել ընդլայնելու ռեսպուբլիկայում բրնձի արտերի տարածութիւնը, Մինիստրների Սովետի առաջարկութեամբ բրնձի պլանտացիաներում ընդհատ ոռոգման փորձեր զրկեցին: Ոռոգման այդ ձևը առաջ բերեց արտի լիակատար ստերիլիզացում մալարիայի թրթուրներից, որովհետև մալարիայի մոծակի զարգացման ցիկլը այդպիսով չէր բուրովում, միևնույն ժամանակ բրնձի բերքութիւնը մնում է բարձր:

2. «Հետախուզումներ ընդդեմ մալարիայի մոծակի՝ նավթի փոխանակիչներ գտնելու համար» (Աղիզյան):

Մալարիայի մոծակի դեմ պայքարելու համար թունավոր նյութեր մատակարարելու դժվարութիւնների կապակցութեամբ՝ Ինստիտուտը խնդիր դրեց այդ նպատակի համար օգտագործել ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերութեան տականքները:

Պայքարի այս միջոցը Հայրենական պատերազմի ժամանակ լայնորեն կիրառվում էր գործնականում թէ՛ գինվորական և թէ՛ քաղաքացիական կազմակերպութիւնների կողմից:

3. «Սուսը պարազիտակրութիւն մալարիայի օջախում» (Սալինյան):

Գարնան ամիսներին կատարված մասսայական հետազոտութիւնների ժամանակ էնդեմիկ օջախում երբեմն պարազիտակիրների մեջ նկատվում է պարազիտակրութիւն՝ առանց որևէ կլինիկական երևույթի: Նման անսիմպտոմ պարազիտակիրները հանդիսանում են մալարիայի վիրուսի խոշոր լրացուցիչ պահեստներ, ուստի դրանց հայտնաբերումն ունի էական էպիդեմիոլոգիական նշանակութիւն: Աշխատանքն ապացուցել է անսիմպտոմ պարազիտակիրների հայտնաբերման և բուժման անհրաժեշտութիւնը:

Ինստիտուտն ունեցել է 29 գիտական կոնֆերանս, որտեղ

48 դեկտեմբեր 1930-ը ինքնուրույն, 13-ը՝ ուֆե-
րատներ և 5-ը՝ հաշվետու-ինֆորմացիոն բնույթի:

Բացի այդ, Ինստիտուտը մեծ աշխատանք է կատարել՝ 1. պայքար մղելով մալարիայի դեմ էվակուացիայի ենթարկված և լեռնային մասերից եկած կոնտինգենտների մեջ. միմիայն ուս-
պուրչիկայի մայրաքաղաքում զննված են 3550 հոգի, որոնց վե-
րաբերմամբ կիրարկվել է հակամալարիական միջոցառումների
ողջ կոմպլեքսը, 2. լիկլիդացիայի ենթարկելով մալարիայի
բուժմանը Բերիայի, Արտաշատի, Վաղարշապատի և Միկոյա-
նի շրջանների առանձին օջախներում, 3. կազմակերպչական-
մեթոդական աշխատանք կազմակերպելով շրջանային տրոպիկա-
յաններում. Ինստիտուտի գիտական աշխատակիցները 314 ան-
գամ մեկնել են շրջանները և մնացել այնտեղ ընդհանուր առ-
մամբ 2400 օր, 4. մշակելով և ուսումնասիրելով մի քանի գիտա-
կան թեմաներ, որի համար կազմակերպված են եղել 11 էքսպե-
դիցիա, ամեն մեկը միջին հաշվով մեկ ամիս տևողությամբ:

Էվակուա-հոսպիտալներում տարվող միջոցառումների կոմպ-
լեքսի կարևորագույն օղակներից մեկը Ֆիզիոթերապիան և
բուժական ֆիզիոլոգերան է: Էվակուա-հոսպիտալներում համա-
պատասխան հատուկ կարիներ են կազմակերպելու և այդ կա-
րիներների համար կազրեր պատրաստելու գործում ղեկավար
գերը պատերազմի սկզբից պատկանել է Ֆիզիոթերապիայի և
կուրորտոլոգիայի ինստիտուտին: Այդ կարիներներում աշխա-
տելու համար Ինստիտուտը պատրաստել է 12 բժիշկ-ֆիզիո-
թերապետ, 17 բուժական ֆիզիոլոգերայի բժիշկ, 19 ֆիզիոթե-
րապիայի քույր և 39 քույր՝ մասսաժի և բուժական ֆիզիոլո-
գերայի դժով:

Ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքն ընթացել
է տեղական միջոցներից (Փարաքարի կազմ, տորֆ, արհեստակա-
նորեն ստացված ցելա) ցելսի փոխանակիչներ գտնելու, ուսում-
նասիրելու և տրամադրել շնասուսուների դեպքում գործադրելու
ուղղությամբ, ինչպես և ռազմական տրամանների ժամանակ
բուժման ֆիզիոթերապիայի նոր մեթոդներ (պարաֆինաթերա-
պիա, նավթալանաթերապիա, ՈՒԲՀ («ՄԵԿ») թերապիա և այլն)
յուրացնելու և բժշկական պրակտիկայի մեջ կիրառելու դժով:

Ինստիտուտը մշակել է ցուցմունքներ և հակացուցմունքներ՝
Հայրենական պատերազմի հաշմանդամներին Ձերմուկ ու Արզնի

կուրորտներն ուղարկելու համար և գործնականում կատարել է Ձերմուկ ուղարկվող հիվանդները ու վիրավորները ընտրությունը:

Ինստիտուտի աշխատանքը շատ ընդարձակ ու բազմազան է եղել: Այդ ամենը ամբողջապես լուսաբանելը մի հակիրճ հոդվածում հնարավոր չէ: Այնուամենայնիվ հիշատակածն էլ բավական է դադարի կազմելու համար այն օգտակար աշխատանքի մասին, որ կատարել են Հայաստանի ինստիտուտները Հայրենական պատերազմի ժամանակ:

Անհրաժեշտ է հիշել, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, նույնիսկ այն օրերին, երբ պատերազմական գործողությունները ծավալվում էին Հայաստանի սահմաններում, նախասովետական բժշկականությունը բացարձակապես ոչինչ չէր արել, էլ չսսնճ, որ այն ժամանակ Հայաստանում բժշկական հաստատություններ էլ համարյա չկային:

Հայաստանի ինստիտուտները Սովետական իշխանության արդյունք են, և շնորհիվ պարտիայի ու կառավարության ամենօրյա օգնության, ուշադրության ու հոգատարության՝ այնքան են աճել և հզորացել, որ Սովետական Միության մյուս հաստատությունների հետ միասին կորողացան պատվով կատարել Հայրենական պատերազմի առաջադրած մեծ և լուրջ խնդիրները:

В. М. АВАКЯН

Չ ДЕЙТЕЛЬНОСТИ ИНСТИТУТОВ МИНИСТЕРСТВА ЗДРАВООХРАНЕНИЯ АРМЕНИИ В ПЕРИОД ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Автор освещает деятельность институтов Министерства здравоохранения, перестроивших в годы войны свою работу на нужды обороны страны.

Работа Медицинского института в основном выражалась в подготовке специалистов для фронта и тыла, в изучении и разработке научных тем из области оборонной проблематики и в активном участии научных сотрудников в разносторонней деятельности эвако-госпиталей.

Институту эпидемиологии и микробиологии, в соответствии с его профилем, принадлежала руководящая роль в деле профилактики и борьбы с инфекционными заболеваниями. Научно-исследовательская работа, орга-

низация производства бактериологических препаратов и практическая работа научных сотрудников этого Института в основном были направлены на успешное выполнение задач по предотвращению возникновения эпидемических заболеваний.

Республиканская станция переливания крови работала над изысканием новых методов консервирования крови и в течение войны бесперебойно снабжала кровью для переливания все лечебные учреждения Республики.

Институт малярии и медицинской паразитологии принимал весьма энергичные меры по предохранению войсковых частей и гражданского населения Республики от малярийной инфекции и переподготовке по тропической патологии молодых кадров врачей, в особенности, военных, а также лаборантов, энтомологов и пр.

Руководящая роль в деле организации специальных кабинетов по физиотерапии и лечебной физкультуре в эвакогоспиталях и в подготовке кадров для этих кабинетов принадлежала Институту физиотерапии и курортологии.